205 Փեսան գալիս է, պատրաստվի՛ր,

1. Փեսան գալիս է, պատրաստվի՛ր,
Ո՞վ հարս, ուղղիր քո հագուստը,
Հիսուս Քրիստոսն է քեզ գալիս՝
Քեզ վրա ուղղած Իր հայացքը:
Գեղեցիկ ես ամեն ծաղկից,
Ձյունից ճերմակ զգեստներով,
Դու կգնաս տուն երկնային
Եվ կցնծաս Քո Տեր Աստծով:

2. Ավելի ճերմակ պիտ լինի
Երկրի վրա հարսը Հիսուսի:
Այսպես հնչեց ձայնն Աստծո.
«Պատրա՞ստ ես, Հա՛րս Իմ սիրելի»:
Ահա շուտով դու ամպերով
Պիտ միանաս Աստծո Որդուն,
Քեզ կտանի Իր ձեռքերով,
Ծտապի՛ր մեկնել երկնային տուն»:

3. Մ՛իտք առ վերջապես, ո՛վ անցորդ
Ինչի՞դ է պետք այդքան շատ բան,
Քրիստոսին սիրտդ միայն տուր,
Պարգև կտա քեզ հավիտյան:
Իսկ Հիսուսը, արտասվելով
Մարդկանց է նայում երկնքից,
Որ գանք և Իր սուրբ արյունով
Հավետ ազատ լինենք մեղքից:
Նրա փառքի համար ստեղծված՝
Փարվի՛ր Նրա կրծքին, շտապի՛ր,
Առջևում կյանքն է հավիտյան,
Կհանդիպես, քիչ էլ սպասիր: